ՄԱՍ III

Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով ՀՀ 2011 թվականի համախմբված բյուջեն կանխատեսվում է՝ եկամուտների գծով՝ 875.0 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի), ծախսերի գծով՝ 1023.6 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումների) և դեֆիցիտը՝ 148.6 մլրդ դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների 2011 թվականի բյուջեների ծավալը գնահատվել է՝ եկամուտների գծով՝ 88.8 մլրդ դրամ (ներառյալ՝ պետական բյուջեից ստացվող հատկացումները) և ծախսերի գծով՝ 88.8 մլրդ դրամ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական բյուջեից համայնքներին առաջիկա տարում կատարվելիք հատկացումների նախագծով նախատեսվում են 2010 թվականի համար նախատեսվածի չափով, ինչպես նաև հաշվի առնելով համայնքների բյուջեների կատարման գործընթացի բարելավմանն ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները, համայնքների 2011 թվականի բյուջեների ծախսերի ծավալը գնահատվում է 2010 թվականի սպասողականի չափով (խիստ նախնական), որը գերազանցում է 2009 թվականի փաստացի ձևավորված մակարդակը շուրջ 39.5 մլրդ դրամով:

«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է ՀՀ 2011 թվականի պետական բյուջեն հաստատել՝ եկամուտների գծով՝ 850.0 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 998.6 մլրդ դրամ, իսկ դեֆիցիտը՝ 148.6 մլրդ դրամ:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող դեֆիցիտի գումարը ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով հաստատված և ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի

կատարման արդյունքներով փաստացի ձևավորված ցուցանիշների նկատմամբ նախատեսված է համապատասխանաբար՝ 44.8 մլրդ դրամ և 92.1 մլրդ դրամ նվազեցումով: ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի և 2011 թվականի ծրագրվող ՀՆԱ-ի հարաբերությունը կանխատեսվում է 3.95 %-ի չափով, 2010 թվականի համար ծրագրված և 2009 թվականի փաստացի ցուցանիշների՝ համապատասխանաբար 6.0%-ի և 7.7%-ի դիմաց: ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող դեֆիցիտի ֆինանսավորման համար ծրագրվում է ներգրավել շուրջ 307.9 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով վարկեր, որոնց զգալի մասը կտրամադրվի Համաշխարհային բանկի և Եվրամիության կողմից (ներգրավվող վարկերի տրամադրման ժամկետների և տոկոսադրույքների մասին տվյալները ներկայացված են սույն բացատրագրի N 1 հավելվածում և N 18 աղյուսակում):